 Cotal son io : chè quasi tutta cessa  
 Mia visione, ed ancor mi distilla  
 Nel cuor lo dolce, che nacque da essa.  
 Così la neve al Sol si disigilla ;

Այսպէս 'ի հողմն առ տերևովք թեթևաթուխ  
Կորննէքր առածանի Սիրելային <sup>183</sup>:

Ո՛վ լայս գերադոյն՝ բարձր այնքանի  
Ի մահացու խորհրդոց, շնորհէ՛ս դարձեալ  
Իմ մըտաց՝ 'ի ցուցեցոյդ դոյնն յայնմանէ:  
Եւ ըզէղու իմ յորդարեա կարող այնպէս՝  
Ձի կայծակըն մի միայն 'ի քոց փառաց  
Կարացից թողուլ ազանց հանդերձեցոց:  
Ձի ընդ գառնանն ինչ չափաւոր յիմն յիշատակ,  
Եւ ընդ հընչէլ յայտոսիկ առղբս սակաւիկ՝  
Եւս առաւել լիցի գիտակ քոյդ յաղթութիւն.  
Կարծեմ ինձ 'ի վերայ կայր գանդաչէլ  
Առ սաստիութեան վառ նըշուլն հանդուրժե-

[ ԼՅՍ՝

Այն ինչ աչկունքս առ 'ի նմանէ թէ շքրջէին.  
Եւ յիշեմ զի պընդեցայ արեազոր  
Այնչափ ընդ այն առեւ բաւել զի յառեցի  
Չհայեցուածս առ Իսկութիւնն անծայրածիր:  
Ո՛վ շքորհք լսալիք, իւ ժբտեցոյ  
Մըխէլ զակահողիս 'ի լյան յաւերժ՝  
Որպէս զի յայն ըզտեսութիւնս իմ ըսպառել:  
Ի խորբս իւր տեսի զի կայ պարածածուկ  
Յարակից ընդ սիրոյ 'ի մի գանդուած  
Այն՝ որ համասփիւռն է ընդ հանուր.  
Ձէութիւն և զարակիցս և զնոցուն բարս  
Համօրէն միահովեալ յայն օրինակ՝  
Ձի զոր կամս 'ի բարբառել սին է նըշուլ:  
Ըզհանրական կերպարանս այսըր կասոյ  
Տեսի կարծեմ՝ քանզի յանձին ևս յորդալիք  
Իմանամ զըւարճութիւն յասել իմ զայս:  
Կէտ մի միայն՝ մեծ ևս է ինձ մուսայութիւն <sup>186</sup>

Così al vento nelle foglie lievi  
Si perdea la sentenza di Sibilla.  
O somma luce, che tanto ti lievi  
Da concetti mortali, alla mia mente  
Ripresta un poco di quel che parevi;  
E fa' la lingua mia tanto possente,  
Ch' una favilla sol della tua gloria  
Possa lasciare alla futura gente:  
Chè, per tornare alquanto a mia memoria,  
E per sonare un poco in questi versi,  
Più si conceperà di tua vittoria.  
Io credo, per l' acume ch' io soffersi  
Del vivo raggio, ch' io sarei smarrito,

Se gli occhi miei da lui fossero aversi.  
E mi ricorda, ch' io fu' più arditio  
Per questo a sostener tanto, ch' io giunsi  
L' aspetto mio col Valore infinito.  
O abbondante grazia, ond' io presunsi  
Ficcar lo viso per la luce eterna  
Tanto, che la veduta vi consunsi!  
Nel suo profondo vidi che s' interna  
Legato con amore in un volume  
Ciò, che per l' universo si squaderna:  
Sustanzie ed accidenti e lor costume,  
Tutti conflati insieme per tal modo,  
Che ciò ch' io dico è un semplice lume.  
La forma universal di questo nodo  
Credo ch' io vidi; perchè più di largo,  
Dicendo questo, mi sento ch' io godo.  
Un punto solo m' è maggior letargo,

Քան թէ դարք քրտան և հինդ ընդ այն ձեան.

Որ 'ի զարմանս ամ ըզՊոսիդ դ' Արդեայն ըս.  
[արկ  
տուեր:]

Այսպէս միտք իմ բովանդակ յակճիւս 'ի կան  
Աներեր ակընկաւոյց պըշնոյր ուշիւ՝  
Եւ ընդ պըշնուլն հանապազ արծարծանէր.

Առ լուսովն՝ եղանիլ է իմն այնպէս՝  
Զի գաննալ 'ի նըմանէ 'ի տեսիլ այլ  
Յանհընարիցն է թէ ումէք իցէ հաճոյ:

Քանզի բարին՝ որ կամաց է նըզատակ,  
Բովանդակի համբուռն 'ի նմա, ւ՛ 'ի դուրս յայն.  
[մէ]

Թերահատար է՝ որ յայնմիկն է կատարեալ:  
Աստուած <sup>137</sup> հակիրճ՝ երս լըից իմն ասացուած՝  
Եւ զոր յիշմն խոկ այնու, քան ըզմանկան  
Որ թացցէ դեռ ըզըզու իւր աս ըսանն.

Ոչ զի պատկեր աւելի քան ըզմին պարզ  
Գուցէ 'ի լոյսն կենդանի յոր պըշնուի,  
Զի է ցանկ զինչ պէս և էրն յառաջնըմէ.

Այլ աս տեսոյս որ 'ի յիս կարողանայր  
Հայելով իմ՝ միայնակ մին կերպարան  
Ընդ փոխել՝ այլակերպէր ինքնին 'ի յիս <sup>138</sup>:

Ի խորին և յանըստուեր լինելու թեան  
Վէ՛հ լուսոյն՝ յայննեցան ինձ պարսրք երէք  
Եւ ազգի գունագեղեալք և՛ 'ի մի չափ.

Եւ մ'ի միւսոյն՝ որպէս Աղէզն յԱղէզանէ  
Ճառաբայութեալ, և երբորդն հուր էրեւէր՝  
Որ հաւատար ասաի ւ՛ անտի ելանիցէ:

Ո՛հ, զիսրդ թերատ են բանք և ապիկար  
Առ խորհուրդս իմ. և այս աս այն զոր տեսի ես

Che venticinque secoli all' impresa,

Che fe Nettuno ammirar l' ombra d' Argo.

Così la mente mia tutta sospesa,  
Mirava fissa, immobile ed attenta;  
E sempre di mirar faceasi accesa.

A quella luce cotal si diventa,  
Che volgersi da lei, per altro aspetto,  
È impossibil che mai si consenta:

Perocchè 'l ben ch' è del volere obbietto,  
Tutto s'accoglie in lei; e fuor di quella

È difettivo ciò ch' è lì perfetto.

Omai sarà più corta mia favella  
Pure a quel ch' io ricordo, che d' un fante,  
Che bagni ancor la lingua alla mammella.

Non perchè più ch' un semplice sembiante  
Fosse nel vivo lume, ch' io mirava,  
Chè tale è sempre qual s' era davante,

Ma, per la vista che s' avvalorava  
In me, guardando, una sola parvenza,  
Mutandom' io, a me si travagliava.

Nella profonda e chiara sussistenza  
Dell' alto lume parvermi tre giri  
Di tre colori, e d' una contenenza:

E l' un dall' altro, come Iri da Iri,  
Parea riflesso: e 'l terzo pareo fuoco,  
Che quinci e quindi igualmente si spiri.

Oh quanto è corto 'l dire e come fioco  
Al mio concetto! e questo a quel ch' io vidi,



Այնպէս է՝ զի և չէ բաւ ասել ասկաւ 109.  
 Ո՛ր լոյս յաւերժ որ հանդիս միայն 'ի քեզ,  
 Միայն իմանիս, և առ 'ի քէն իմանալի  
 Եւ իմացեալ՝ սիրես ըզքեզ առ 'նդ քեզ հաճիս 100.  
 Այն պարոյր որ յարակից ծագումն ասեալ  
 Թ՛ըւէր 'ի քէն՝ որպէս ըզլոյս արփիափայլ,  
 Վայրիկ մի յաչաց իմոց պարահայեաց  
 Ներքոյ կնքեան՝ յերփըն դուռոյն իւր խտարուն,  
 Թ՛ըւէցաւ ինձ նըկարէն 'ի մեր պատկեր՝  
 Վասն որոյ աչքս համայն 'ի նոյն էին յառեալք:  
 Զոր օրինակ երկրաչափ յառեալ բնաւին  
 Զափեւ ըզբոլորակ և չբոսանէ  
 Ի խորհէլ զառաջանիւթն ում կարօտի.  
 Սասէս էի ես յայն ասել նորանորոգ.  
 Կամէի ասանեւ իւր էկն 'ի ճահ  
 Պատկերն առ պարունակ՝ և իւր կայ անդ.  
 Այլ չէին առ այսքանի փետրոյրս թռիչք.  
 Սակայն միտք իմ սարսեցաւ փայլատակմամբ,  
 Որով 'ի լուումն եկըն կամացն իւր անձկուութիւն:  
 Ի վեհ ասել մտոց աստէն պակասեաց ոյժ.  
 Այլ արգէն հրովէր զիւձս և ըզկամո՛  
 Որպէս զանիւ որ 'ի հիւ գայ առ հաւատար,  
 Սէրըն շարժող Արեգական և այլ աստեղոց:

ԱՐԳԱՅՈՒԹԻՒՆ. ԵՐԳ ԼԳ. 49-145.

È tanto che non basta a dicer poco.  
 O luce eterna, che sola in te sidi,  
 Sola t' intendi, e, da te intelletta  
 Ed intendente, te ami ed arridi!  
 Quella circolazion, che sì concetta  
 Pareva in te, come lume riflessso,  
 Dagli occhi miei alquanto circospetta,  
 Dentro da sè, del suo colore istesso,  
 Mi parve pinta della nostra effige;  
 Per che il mio viso in lei tutto era messo.  
 Qual è 'l geomètra, che tutto s' affige,  
 Per misurar lo cerchio, e non ritruova,  
 Pensando, quel principio ond' egli indige;  
 Tale era io a quella vista nuova:  
 Veder voleva come si convenne  
 L' imago al cerchio, e come vi s' indova;  
 Ma non eran da ciò le proprie penne:  
 Se non che la mia mente fu percossa  
 Da un fulgore, in che sua voglia venne.  
 All' alta fantasia qui mancò possa.  
 Ma già volgeva il mio disiro e 'l velle,  
 Sì come ruota che igualmente è mossa,  
 L' Amor che muove il Sole e l' altre stelle.

PARADISO, Canto XXXIII, v. 49-145.

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

- 1 Գուհն է որ խօսի:
- 2 Աշանակեալք են երեք աստուածային անձինք յատուկ ստորոգելեօք իւրեանց:
- 3 Է այս բառ ասացուածոյ Արիստոտելի, որ վարդապետէր եթէ 'ի ստեղծեալ էից ոմանք են յաւիտենականք, այլք ժամանակաւորք և փոփոխելիք: Յաւաջնոցն են այնոքիկ զորս ստեղծ Աստուած ուղղակի և անմիջնորդ, որպէս 'ի սկըզբանէ զնիւթն առաջին, զերկինս, զհրեշտակս, և ապա ժամանակաւ զհոգի մարդկային. իսկ յերկրորդէն են յառաջ եկեալքն ազգեցութեամբ նոցուն իսկ երկնից կամ երկրորդական պատճառաց: Աւստի կամի ասել Տանգէ եթէ և դժոխք են ստեղծեալք անմիջնորդք, վասն որոյ և յաւիտենական: Եւ այսու կամի ծանուցանել զի դժժոխք չեղեն վասն մարդկան, որ տակաւին չև երծնեալ, այլ վասն ապստամբող հրեշտակաց, որ-

պէս Քրիստոս ասէ իսկ ինքնին զյաւիտեանական  
հրոյն որ պարբարեալ է սաբանայի եւ հրէշտակոց նորա :

4 Զբարբէն միաց բանի իմա զԱստուած, որ է գե-  
րազոյն եւ միակ ճշմարտութիւն յոր կարէ հանդ-  
ջէլ միաք մարդկային :

5 Այլ խոջին սոսիք, այսինքն կացին չէզոքք, միայն  
անձանց իւրեանց ուշ կալեալ :

6 Զուսին մահու ակնխաւիս. այսինքն է՝ ոչ կարեն  
գառնալ յոչինչ, որպէս ցանկանն :

7 Այլոց համայն են վեճակոց. այս է՝ մական ընդ  
ամենայն վիճակ դատապարտելոց :

8 Աղանդախոսմբն խոքելոց, այսինքն՝ վատաց, որք  
անհաճոյ են Աստուծոյ եւ զիւսաց, եւ յերկրի ան-  
հաճոյ են ամենայն կուսակցութեանց :

9 Այս վարդապետք որ եկացն յաշխարհի առանց  
գործով յայտնի առնելոյ զի կէսայ, ոչ երբեք եղև  
կենդանի յասայ յայլոց ՚ի մարդկանէ :

10 Կըստպարբար, այսինքն է՝ նիւթասէր եւ ա-  
նարք որկորաժէտք, որոց Աստուած որովայն իւրեանց  
է :

11 Որդն ահագին. այլբանորէն որդն ստի ՚ի Ս,  
Քրիս որ ինչ յաւիտեանական ասնջանքն են գա-  
տապարտելոց ՚ի ստորեւ երկրի, ուր ծնանին որ-  
դունք. եւ Կերբերոս՝ որ թարգմանի սպառող, կա-  
րի իրաւամբ կայ ՚ի ասնջէլ զորկրամնլ, ետեակ  
որկորովքն՝ անկաք ոսթութեամբն եւ այլն :

12 Իւրեանցն սընոքեաց, այսինքն է՝ ասն ՚ի վերայ  
տրոփելով ՚ի վերայ թափուր՝ ասնայն մարմնոց նո-  
ցա, կամ լաւ եւս ասել ստուերաց. — որ անջն  
լուսի. որ նմանի մարդկեղէն մարմնոց :

13 Որ է ասել՝ Գու ծնար յառաջ քան զմե-  
սանէն իմ :

14 Ի պայծառութեանս՝ այս ինքն է՝ յաշխարհի. եւ  
է այս հակադրութիւն ընդ խաւարային կեանս  
զժոխոց :

15 Կիակիոս (Ciaccio) եկաց քաղաքացի ակա-  
նաւոր. այլ մասնեալ զանձն ՚ի ձեռս շուսայտու-  
թեան արտի նուստացաւ մինչև ՚ի պայման կե-  
նաց պորտաբոյժ հացկատակաց, որոյ վասն կու-  
չեցաւ թերես եւ լիստոյ, (ի մեղ սառապարձու-  
թեամբ Կիակիոս), որ խոզ նշանակէ : Այլ առա-  
ւել ճշմարտազոյն թուի զի աղաւաղումն իցէ  
այս Յակոբոս Jacopo (Եաքոս) անուան :

16 Ոսպանիք երիւնչելոյ այս է Փլորենտիոյ, որ  
հերձեալ էր ՚ի բաղուժ կուսակցութիւնս. —  
Համարի Տանդէ զի եւ հողիքն կորուսեալք նկա-  
տիցեն իւրք զհանդերձեալն. եւ զայսմանէ խօսի  
բացայայտուն յերդն ժ :

17 Մասն անպատասխան. այսպէս կոչեցաւ Մպիտակ  
կուսակցութիւնն, քանզի առաջնորդ եւ գլուխ էր  
այնմ աղբատոջմն Զէրբեանց, եկեալ յանտա-  
ւացն Վալ տի Սիււվի :

18 Ըմբան հալածեացէ, այսինքն զՍեաւ կուսակ-  
ցութիւնն :

19 Յարդիւ երիւ, ՚ի մէջ երկոյ ամաց. յառաջ քան  
զանցանել երկոյ ամաց :

20 Ատանոր զtestè piaggia ասացուածն ու-  
մանք համարին իբրև գուշակորէն ասացեալ զԿա-  
րոլոս Վալուայէ, որ հրաւիրանօք Վանիփակիոսի  
Ըի, էանց յիտալիա եւ առաքեցաւ ՚ի Փլորենտիա,  
ուր ընկճեաց զհերձուածն որ հակասան էր  
Հուովոյ արբունեաց եւ իւր իսկ : Իսկ այլք զՎա-  
նիփակիոսէ կարճեն ասացեալ մարտելուի՝ հնարա-  
ւորի իմաստիւք, որպէս զի յաղթեաց Սեաւ կու-  
սակցութիւնն :

21 Թեւեպ ընդ այն հարցի յարբոյր եւ պայտասի. թէ  
եւ Սպիտակ կուսակցութիւնն վասն այսպիսի ա-  
նորէն հարստահարութեան լսցցէ սրամտազին  
բարկութեամբ :

22 Արդարք երկու գոն անդ : Համարին քննաբանք

զի հաւանորէն զանձն կամիցի նշանակել Տան-  
դէ, և երկրորդ զմտերիմ բարեկամ իւր Կուխոյ  
Քաղաքանդի:

23 Ածել զիս այլ-սն 'ի յոռւ, այսինքն՝ աղագեմ զի  
նորացուցես զլիշատակ իմ յաջաբհի: Այս կողմ  
համբաւոյ զոր ցուցանէ Տանդէ 'ի մեռեալս՝ լծ է  
օգտաշահ խրատուք:

24 Այլ ոչ դարձնու, ոչ ևս այլ 'ի վեր ելանէ, յա-  
ռաջ քան զհամառօտս առուրն դասաստանի:

25 Իբեանց ոտիւն դբո-նիւն, Աստուած՝ հակա-  
ռակորդն մեղաւորաց:

26 Սա եղև այր մեծատուն և հզոր՝ այլ յան-  
հարինս զայրացկոտ: Աղբատոջնն նորա հակա-  
ռակորդ էր Տանդէի, և մի 'ի նոցանէ ամենայնիւ  
հարեցաւ զի մի գարծնի նա 'ի հայրենիս իւր:

27 Հասեալք երկրքին քերթողքն Վերգիլ և  
Տանդէ ընդ քաղաքան Ռիտէ, զեքն պահա-  
պանք դրանցն ոչ ներեն Տանդէի կենդանեաւ  
մտանել անդր. այլ հրեշտակ մի առաջեալ յԱս-  
տուծոյ՝ բանայ նոցա զդրուննս:

28 Ստիւքսեան ճահճին:

29 Վերգիլիս՝ որ ձեռքը իւրովք փակեալ էր  
զաչս Տանդէի, որպէս զի մի անոցէ նա զահար-  
կու գլուխն Մեղուայ:

30 Տանդէ է որ խօսի, հասեալ յերկրորդ առուց  
դժոխոց ընդ Վերգիլեայ, ուր են անձնասպանք  
այլաբոսեալք 'ի ծառ:

31 Վերգիլիս:

32 Այսինքն է՝ առ 'ի մէջ թշնամանեալ, մորմո-  
քեալ հօգի: Վերգիլիս 'ի յուշ ածէ աստ զանցս  
Էնիականին իւրոյ (Պիլքք Գ. աղ 40, և 'ի յա-  
ջորդն) յորում նկարագրեալ է անասա մայրեաց  
լնակելոց 'ի մարգիկեղէն հողոցոց:

33 Սա է Ահարոս Տէլէ Վլնէ՝ կապուցի,  
քարատուղար Փրեգերիկեայ Ռե. առ որում շնորհս

յոյժ գտեալ՝ կարաց առնել նովաւ զոր կամե-  
ցան: Արքունականքն յաջաղիտք ամբաստանե-  
ցին զնա իբրև անհաւատարիմ՝ արքունեացն գաղ-  
անեաց, և զիւրահաւանն Փրեգերիկիս ևս կու-  
րացուցանել զաչս նորա. ընդ որ ոչ կամեցեալ  
հանդուրժել անձին արար, ընդ որմունս բանտին  
հարուածեալ զլուրին: — Ընչբիս կապ քախանս՝  
լման փոխաբերարար զհաւանելոցն և զհաւանե-  
լոցն, զկամելոցն և զոչ կամելոցն:

34 Այսինքն՝ զհեանս: Եւ ասել կամի զի հաւա-  
տարմութիւն մեծ ունելով նորա առ Փրեգերի-  
կոս՝ գրգռեաց ընդդէմ իւր զցատունն Կուել-  
փեանց և զնախանձ արքունականաց, որ և եղև  
պատճառ մահուն իւրոյ: — Ոմանք ընթեանուն  
le vene e i polsi. այսինքն, 'ի շէղ պապանն այնպէս  
(կացի հաւատարիմ) զի և զբալլս խրոսի և զընե-  
բալլս:

35 Վասան, նախանձն պալատականաց, որ ոչ  
երբեք զհրատուրիչ և զանամթ աչն 'ի բաց կա-  
լաւ յարքունեաց:

36 Փրեգերիկիս Բ:

37 Ես արգարս՝ սպանի զիս յանիրաւի:

38 Ի նոր կեանս իմ երգնում:

39 Այսինքն՝ պատառուածս, ուստի անցանեն՝  
'ի դուրս ելանեն ձայնքն ցաւաղինք և հէծու-  
թիւնք:

40 Յառուր աշխարհական ատնին:

41 Այսորիկ հալածեալքն և կեղերեալք 'ի շանց  
են անձնասպանքն առ վատնելոյ զնչս իւրեանց  
զեղևութեամբ:

42 Սա եղև՝ ըստ Պրքբալոյն պատանի սինացի  
մեծաձնիս ժառանգութեան լիճակեալ, զոր իս-  
պառ վատնեաց 'ի սակաւ առուրս և անկաւ 'ի  
ծայրագոյն աղբատութիւն: Եղև 'ի թուոյ Սիե-  
նացոցն որ 'ի 1280 զնացին յօշոնութիւն Փլորեն-

ախաղացոց ընդդէմ Արեախնեանց. և 'ի գառնաւն 'ի Սիեհա՝ հարեալ զժառայուածիւն, անկան յուրոպթ լարեալ յԱրեախնեանց, մօտ 'ի Քիաւէ Տօպպլի, ուր բազումք մեռան: Լանտ՝ Թէպէս կարացեալ փրկել զանձն՝ այլ ոչ կամեցեալ հանգուրժել հէք և կարօտեալ կենացն, անկաւ 'ի մէջ Թշնամեաց՝ պատահել մահու: — Ստատնօր արշն ըստ քննաբանից խնստ և կիրս մեծ յաւելու 'ի բանն, ցուցանելով իմն եթէ յառաջնու մն նուազի 'ի զուր փութացաւ 'ի մահ, և այժմ՝ յանձնարին տանջանս գորով՝ 'ի դէպ ևս գոչէ, զի եթէ մարթ ինչ իցէ, հասցէ մահն և ազատեացէ զնա:

43 Միւսն այն է Յակօբ 'ի Պատաւիոնէ, աղնուատոճմ՝ Մատրանական Ս. Անդրէասայ կուչեցեալ. և սա շուայտուածեամբ իբրև զառաջինն սպառեաց զանբաւ ինչս իւր: 'ի մէջ այլոց ասորբինակ գործոցն պատմի և այս, զի յաւուր միում էա հրկիղէլ զմի յամարանոցայ իւրոց առ 'ի զուարճանալ 'ի տեսարան մեծի հրդէհի: — Առ այսպանէլ՝ արդե՞նիչ խառ ասէ զպայքարն յորում Սիւնացիք խուճապեցան 'ի փախուսա:

44 Գաղան ճիւղով, կերպարան նենգութեան:

45 Կամի յիշեցուցանել զկործանումն Տրոյիոյ և զկոտորած 'ի ձեռն նուիրի խաբէական Էրիվաբին:

46 Այսինքն է, յեղբւր մարմարեայ ամանցն ուր շրջէին քերթողքն երկրքին:

47 Հանգոյց ասելով կամի իմանալ զփոքրիկ խաբէութիւնս, որովք շուրջ պատէ զայլ՝ նենգութիւն: Պապեանքն էն՝ որովք ծածկէ զգառն և զաղեսաւօր գործս իւր:

48 Արակնէ՛ կին անուանի օտայնանկ 'ի Լիւզիոյ՝ զոր փոխեաց Պալլաս 'ի սարգ:

49 Որ է Գիամիտ փլորենտացի, յազգատոճմէ Բոնատեանց կամ Աբատեանց, որ ըստ Տաւ.

զէի այլափոխեալ 'ի դժօխս յօձ վեցոտանի՝ յարձակի և ընդհատենալ նոյնաւորի ընդ Անդէլեայ (Angelo Հրեչասի) Պրոուսըքսայ:

50 Այսինքն է՝ զլերջին օտան:

51 Պապիրն յորժամ բորբոքիցի հրով՝ յաւաջքան զբոցն տեսանի 'ի նմա գոյն մթին՝ որ ոչ է սեւա, և երանգն սպիտակ այլափոխի և շիջանի: — Պապիրն էր նիւթ ինչ այրելի 'ի կանթեղուս փոխանակ բամբակի: Այլք կարճէն եթէ կամիցի ասել զպապիրն Եգիպտոսի, զճառն՝ յորմէ կաղմէր Թուղթ:

52 Իտալերէնն է Sotto la gran fersa de՝ di canicular, զոր երկու եղանակաւ իմանան մեկնիչք. ոմանք զբառք fersa ծագեալ համարելով 'ի լատին ferreo բայէն՝ որ է ասել այրի՛մ, կիւ՛մ, և զfersa հասարակ անուան իմանալով սուրի՛ն Զերձա՛նէ՛ն, քօբ, և այլն: Այլք ամին հակառակ զfersa համարին եղեալ փոխանակ sferzaի, որով կամին զի նշանակիցէ խաբալան, և զի Տանգէի կամեցեալ իցէ ասել ընդ մեծասասք խաբալանսս շքիկն առօր, 'ի մէջ բերելով եթէ ցայսօր 'ի կողմանս Փլորենտիոյ ասի la sferza del sole այսինքն է՝ խաբալան արեւոս:

53 Որ է սլորան:

54 Լուկանոս ի՞նչ գիրս Փարալիականին իւրոյ պատմէ զի Սաբելլոս մի 'ի զօրացն Կատոնի, յանցանելն ընդ Լերիա հարեալ յօձէ գողցես իմն յական քթմեղ ստառեցաւ և դարձաւ յաճիւն: Եւ միւս որ զօրական Նասիդիոս անուն խոցեալ 'ի քարբէ՛ այնպէս ուռուցեալ եղև՝ զի զբահիւն հանդերձ պայթեցաւ:

55 Ովդիոս 'ի 'Ի գիրս Այլարանութեանց իւրոց պատմէ զայլակերպիւն յօձ Կադմեայ որդւոյ Ադենորայ թագաւորին Փիւնիկիոյ և հինարկոզի զԹիբէ: Եւ 'ի Ե գիրս իւր պատմէ զայլափոխիւն Արեթուսայ յաղբիւր:

56 Փոխաբերաբար՝ է իմանալ զոտան, յորոց միանալոյն կազմելոց էր տառնն գազանին:

57 Այսինքն է՝ աջքն:

58 Որ կայրն յոսին զդուռն օձային յետաքարչեաց առ ծամելու (զի նմանեցուցէ մարդիկ զինի) . և ՚ի լուծենէ հիւթոյն յորմէ կազմեալ էր և որ լցան անդ՝ այսինքն ՚ի ծամելան, կերպացան և էլին ՚ի դուրս ահանջք: Ի հասցում ծոյն այն, այսինքն յաւելորդ հիւթոյն որ ոչ յետա քարչեցաւ, այլ եկաց ՚ի միջնն՝ արար ունդունս:

59 Գլուխ միոյն կայր ՚ի վերայ զլնոյ միւսոյն իբրև թէ լնէր զլնանոց:

60 Տիդևս կալիդոնացի և Մենալիպոս թեբացի անհնարինս մարտուցեալք ընդ միմեանս առ պարսպք թեբէի՝ մահացու վիրաւորեցին զմիմեանս: Տիդևս յետ մեռանելոյն Մենալիպոսայ դեռ ևս կենդանի գտով՝ ետ բերել զգլուխ նորա և առ սաստիկ զայրութիւն սկսաւ կրծանել:

61 Եւ ես հասուցից քեզ փոխարէն յաշխարհի, եթէ ընդու իմ որով խօսիմն և խոստանամ՝ վատանուն առնել զլծնամին քո՝ ոչ դասացի մեռանելովս:

62 Այսինքն՝ խօսից քոց . մինչ լսեմ զբարբառելք քո:

63 Կոման Ուգոլին Քերարտեան (Տէլլա Կէրարտեպա) զլուխ հերձուածոյ ՚ի Բիդա, յամին 1288 հալածեաց անտի օգնութեամբ Հոուգիերակ զթոռն իւր զՆինոս՝ առաջնորդ հակառկ հերձուածոյն, և կալաւ զտեղինորա կոչեցեալ զանձն կոմս Պիզայի (Բիզայ): Այլ ապա Հոուգիերի համբաւեալ էթէ Ուգոլին սակ արկանիցէ Փլորեն սացոց Վաճառել արածատի մի զբանի մի զգեակս Պիզայ - որ ոչ յոյժ հաւատայ է ՚ի պատմութենէ - գրգռէ զժողովուրդն ընդդէմ նորա, և ձեռնորուութեամբ Գուալանդեայ, Սիզմոնդեայ և Լամ

միոնիեայ՝ ազատազարմ գերգաստանաց Պիզայի և այլովք ժողովրդովք կալաւ իբրև մասնիչ և արկ որդւովքն և եղբորորդւովք յաշտարակն Գուալանդեայ . և յետ վեց ամսոց ետ արկանել զբանալիս այնորիկ յԱւնայ դետ, որպէս զի մեռանիցին ՚ի սովս:

64 Մեծաւ արուեստիւ մասածեալ է այս Էրազ ՚ի Տանգէէ, որով կոման Ուգոլին իմանայ զմտաւրեա աղէաս իւր, և անհետ լնի ՚ի նմանէ ամենայն յոյս:

65 Սա՝ զոր կրծեմն՝ թուեր ինձ զլուխ և առաջնորդ բազում ամբօխ որք ՚ի հալածել կային զգայլ մի հանդերձ կորեամբ իւրով ՚ի լեան Ս. Կուլմանոսի, որոյ վասն Պիզայիք ոչ կարեն տեսանել զԼուկա (Լուքքա), քանզի այդ լեան ընդ մէջ կայ երիցունց քաղաքացոյ:

66 Այսինքն է՝ սովալուս, փոյթեանդն և քալամարզիկ շնեամով: Ի գայն և ՚ի գայլակորիւնս իմանալն է զկոման Ուգոլին որդւովք իւրովք, և ՚ի շնեամն՝ զամբօխ Պիզացոց:

67 Ասել կամի՝ և ես տեսի ընդ քառեակ դէմս որդւոցս, արդէն իսկ ՚ի բնէ նմանք հօրն իւրեանց՝ և զնմանութիւն ցաւազին և հիւժեալ երեսացս:

68 Այսինքն՝ էթէ ՚ի ցաւոց սրտիս ոչ մեռայ, այլ առ քաղցի հարկ եղև ինձ ուր ուրեմն մեռանել:

69 Երեքին երեքն նշանակք են երկոց մասանց աշխարհի ծանօթից յայնժամ, յորոց հոգիք տեղան յարքայութիւնն խաւարի որում իշխէ նա: Կարմրագոյն են երեսք Եւրոպացիք, ընդ շէկն և սպիտակ՝ Ասիացիք, և սեւա՝ Աֆրիկացիք:

70 Վիրգիլիոս է որ խօսի առ Տանգէ, հասեալ նոցա ՚ի Մաքքարանի առ չորրորդ ազգ անհոգաց՝ որք պարսպեալ զինուց, զպրութեան կամ՝ քաղաքական վարչութեան՝ անփոյթ եղեն զկրօնական

սրարտուց իւրեանց և թողին 'ի վերջին աւուրս  
կենաց:

71 Չայնարկութիւն է այս քերթողին: Խբոբ  
և անաբոբ, այսինքն այնպէս՝ որպէս արհամարհէ  
ոք մեծանձն հօգուով զանարգ և զնուաստ իրս:

72 Սորգէլոյ եկաց մեծանուն բանաստեղծ քեր-  
թող յԺԳ դարու, որոյ 'ի սիրալիք գրկախառ-  
նութենէն ընդ Վիքրիլեայ սրտածառս առնու Տան  
դէ ցաւով և զայրացմամբ սրտի եզրիծ անել զպա-  
ռակտեալ և զանկարգ վիճակ Իսաակոյ, յորում  
քաղաքացիք ատէին զմիմեանս և ճիւնէին 'ի կր-  
ծանուն իրերաց:

73 Նմանեցուցանէ զԻսաակա երկուորի: Կայրն  
Յուսափնիանոս ազատեալ զԻսաակա 'ի Զ դարու  
'ի Գոթաց 'ի ձեռն Բելիսարիոսի և ասոս Ներսե-  
սի հայազնոյ՝ հաստատեաց նորոգ վարչութիւն,  
արար մատենան օրինաց յիւր անուն կոչեցեալ, և  
ակն ունէր դարձուցանել զնա յառաջին փառս  
իւր. այլ ուղղեալ՝ այսինքն է կազմեալ, յարգա-  
րեալ զսանձ նորա, վերստին բարեկարգեալ զօ-  
րէնս, թէպէտ և բարումբ ձեռն արկին ունել  
զնա, այլ չեղև որ քաջ 'ի սանձէ և 'ի վարել զնա:  
Յորքէ ւերի՝ այսինքն է առանց օրինաց:

74 Ալբերտոս Աւստրիական՝ որդի Հուռտողիայ  
Հաբսբուրգեան (Հաւբերգոնի), առաջնոյ կայ-  
սեր 'ի ամեն Աւստրիոյ, ընթերցաւ 'ի կայսրու-  
թիւն յամին 1298 կամ 99, և ոչ կամեցաւ եր-  
բեք գալ յԻսաակա: Գուշակօրէն իմն ակնարկէ 'ի  
բուռն մահ Ալբերգեայ յեղբորորդւոյ իւրմէ 'ի  
Յովհաննայ Աւստրիական 'ի 1308: Սա այս Ալ-  
բերտոս ոչ կամեցաւ նպաստամատոյց լինել հա-  
լածեցոց Կիպրլեանց, և աստի իցէ թերևս ցա-  
սուսն քերթողին ընդգէմ նորա:

75 Այսինքն է 'ի Գերմանիա կամելով միշտ  
ընդարձակել զիշխանութիւն ակրելով նորանոր

ակրեաց, և թողով զի Իտալիա՝ պարտէզն կայ-  
սրութեան անապատացի:

76 Առաջին երկուքն են ազատական ազգա-  
տոհմբ Կիպրլեանք 'ի Վերոնայ, և երկու վեր-  
ջնքն յԱրվիետոյ նոյնպէս ազատ ազգատոհմբ  
Կիպրլեանք:

77 Ծարկասուրբն (Santaflor Սանգաֆիոր) կով-  
սութիւն է 'ի Մարեմա Սիենացոց, հար-  
կատու կայսեր, բայց յայնժամ առ անհոգու-  
թեան նորա և վաթար վարչութեան կոմսիցն  
ազմկեալ և ըն գողութեամբ, վասն որոյ ընդ  
հենդն է ասելն՝ Տէռչէն րոլչէն է անդոյն: Ոմանք ըն-  
թեանուն՝ Ո՛րպէս վարի, Come si cura, և այլք  
բատեգելոյս՝ Com'è sicura.

78 Այսու անուամբ եղեն արք բազումբ ահա-  
նաւորք 'ի Հաովմ, յորոց մի է որ էառն զՍիրա-  
կուսա, և միւսն այն որ ընդգէմ եկաց բանակա-  
լութեան Յ. Կեսարու:

79 Այս է՝ բազում զգծնամիտ քաղաքացիք և  
աստ և այլուր իմանան և կամին զարգարն, այլ  
նախ քան զառն լճիս, յառաջ քան զգատա-  
տան առնել զսասնին և զհասարակաց իրաց՝ խոր-  
հին քաջ և ոչ ոստուցանէն զնեա յազգեղանէ՝ որ  
այլ ոչ ևս դանայ, և այլն:

80 Կող լերինն ընդ որ ելին 'ի վեր Վիրիլիոս և  
Տանդէ՝ մարմարակուռ էր, սպիտակափայլ և  
հրաշակերա քանդակօք ըն. և քանդի յայսմ տե-  
ղոջ սրբին հօգեք հպարտից՝ վասն որոյ քան-  
դակքն այնոքիկ նկարակերպ էին օրինակօք խո-  
նարհութեան, յորոց առաջին և անձառելին է  
օրինակն Բրիստոսի:

81 Ս. Կոյսն Աստուածածին:

82 Յիշելի աստ անակնկալ մահ Ողայ՝ որով պատ-  
ժեաց զնա Աստուած վասն ձգելոյն զձեռն իւր 'ի  
տապանակն սուրբ յանկանել նորին:

83 Մէջ՝ քանզի խոնարհէր առաջի Տապանակին Աստուծոյ. և սորոք քան զարքայ՝ քանզի թողաւ որ գոլով՝ այնպէս հակառակ մտաց աշխարհի նուաւանայր պարելովն:

84 Մինչդեռ Տանդէ կայ հիացեալ ՚ի տես քանդակայն՝ և ահա դան հանդէպ իւր հոգիք ոմանք որք ընդ սաստիկ ծանրութեամբ բեռանց ճինչեալք քաւեն զմեզս հպարտութեան իւրեանց, որոց ՚ի տեսիլ լի եռանդեամբ ձայնարկէ ընդդէմ հպարտից:

85 Ասել կամի՝ կարծէք զաչացու մտօք յառաջել և հասանել ՚ի մեծ և ՚ի բարի վախճան, և ոտնփոխք ձեր ընդհակառակն յետագնացք են և հեռացողք ՚ի հասանելոյ՝ ՚ի վախճան բարութեան:

86 Իմաստութեամբ վարեալ սոսէ հենդնութեամբ զՓլորենտիա, իրզիծաբանել կամելով զվասթար վարչութիւն իւր: Հուրբահոնա կամուրջ է ՚ի վերայ Աւնոյ դետոյ:

87 Սոսինքն է՝ ամոգուղբս այտօքիկ կառուցան ՚ի հին ժամանակս մինչ ՚ի Փլորենտիա ոչ գոյր խաբէութիւն. և ասելովն քաւմք և լախ յապահուիչ կայն՝ կամի յիշեցուցանել դերկոսին զմեծ խորդախանս և զգոգոնս որք զխիւցան յաւուրս Տանդէի ՚ի պետական մասակարարութեան:

88 Ի մտանել Տանդէի ՚ի Մաքրարանն՝ դրոշմեաց հրեշտակ մի ՚ի ճակատ նորա եօթն Մէնս նշանակեալ եօթն մահացու մեղաց. մէն մի մեղաց էին ուրոյն պարունակք, յորոց յիւրաքանչիւրոցն էլանել՝ գերծոյր հրեշտակն մի մի Մէն ՚ի ճակատս բերթովին:

89 Ի Հուգոնէ Մեծէ որ խօսեցեալն էր ընդ Տանդէի զանձնէ և զսերնդոց իւրոց:

90 Իեղոս կղզի յԱրշակղազսն՝ որ սարսուէր և ծածանէր ընդ ալիս, այլ յետ օթեաննելոյ այգր Լատոնայ ուր ծնաւ զԱլտրոն և զԱրտեմիս՝ այն

է զԱրև և զԼուսին, զորս երկուս ալ ինոն եմբերայնս կոչէ Տանդէ, եկաց սասանութիւն կղզւոյն:

91 Յետ այնորիկ սկսաւ ասել Վիրգիլիոս. Ի ժողովս երջանկաց շնորհեցէ քեզ զխաղաղութիւն Արգարութիւնն աստուածային որ զես ՚ի Լինկոնն արկեալէ յաւե՛թարօս:

92 Ոմանք այսպէս գնեն զտողս

Come! diss'egli; e perchè andate forte?

այսինքն է՝ Չե՛րք, ասց նա. և առ Բն զԸնայդ հապճեպ: Իսկ իմաստ յաջորդ բանիցն այս է՝ զի եթէ ստուեր էք դուք և անարժանք եղանելոյ յերկինս առ Աստուած, զիմորդ գայք այսր, և այլն:

93 Սոսինքն է ըստ հեթանոսաց և քերթողաց Պարկայն Լագեսիս որ անկանի զառէլս կենաց ամենայն մարդոյ: — Կլտոն՝ այլ որ Պարկայ, որ ՚ի ծնանել ամենեցուն գնէ ՚ի վերայ սղեկալին Լագեսիսի զմանելին, յորոց մանելոյն չամ անել ունի կեանք առն իւրաքանչիւր:

94 Սոսինքն է՝ Աստանոր կարէ ընել պատճառ յեղափոխութեան անոր զոր առ ինքն ընդունի երկինք յինքննէ և ոչ այլով պատահարաւ: Բացոյցայ ևս ասել՝ աստանոր կարէ ընել պատճառ փոխփոխութեան հոգւովքն որք մաքրեալք ելանեն երկինս, և ոչ այլով իւրք:

95 Որ է ասել և ոչ աղէղն ծիածան: — Իրիս բանբերն Հերայ այլափոխեալ ՚ի ծիածան, էր ըստ առասպելին, զուստր Տաւմանտայ:

96 Ուր կայ հրեշտակն փոխանորդ Ս. Պետրոսի: — Արխանաւել որոշէ զնսնաւ շողին ՚ի ցաւ մտք շոգւոյն. ՚ի խոնարայն համարի զանձրև, զձիւն, զկարկուտ, զցօղ և զեղեամն. ՚ի ցամաք գոլորշւոյն զՏոլմն՝ եթէ իցէ շոգի նուրբ, իսկ եթէ իցէ սոռուարաղոյն՝ զասանութիւն երկրի:

97 Սակաւ մի կամ յոյժ ՚ի վայր քան զասա-



ցեալ երիս աստիճանս թերևս սարսուէ երբեք երբեք:

98 Հինք կարծէին զի հօղմն ստորերկրեայ իցէ պատճառ սասանութեանց:

99 Չյորայայեալ հօգուց են բռնքն յորս առաջին շարժումն՝ մինչ զքան զանձինս մարբեալը՝ է կանգնել յտօին կալ: — Կամ մըւ շարժին ասացեալ է զայլ հօգուց որք չեն յորսայս անկեալք, և որք այն ինչ մարբեալք ելանեն յերկինս:

100 Չի հօգին սրբեալ է՝ ցուցանէ յայանապէս կամքն միայն, որ՝ այսինքն է այս կամք, ամենևին ազատ ՚ի փոխել զբնակութիւն իւր կաշնու գրասէ զհոգի, և նպատաւոր լինի հօգուոյն: Ի ստորև ատա ասացէ եթէ զհարգ հօգին կամի միշտ փոխել զբնակութիւն իւր, և թէ որպէս ընդդիմանայ նմին այլ իմն կամք՝ միտումն սրբեալ լինեցա՛յ յորմէ յաղթի, որով և չէ բոլորովն ազատ՝ բայց յեա մարբեցն:

101 Նսե կամի նախ իսկ ելանել յերկինս՝ այլ ոչ թողու զինքն ազատ բերումն՝ միտումն մարբեալ լինեցա՛յ, զոր բերումն արգարութիւն ատուածային ՚ի տանջանս արկանէ ընդդէմ կամաց ՚ի Մաքրարանի, այսինքն ընդդիմակալ անեն կամաց ելանելոյ յերկինս:

102 Այսինքն է՝ զի ես մաղթեմ և ցանկամ զի արձակեացէ զամենեսան վարդապետի ՚ի յերկինս:

103 Տեսանեմ զպատճառն որ կատեալ ունի զձեզ յայսմ անզուց, որ է՝ որպէս ասացաքն, բերումն անելոյ զհասուցումն ասուածային արգարութեան:

104 Այսինքն՝ ոչ կարացի կատարելոպէս աւարտել զերկրորդ բերթուածն իմ, զի եհաս վասճան կենաց իմոյ:

105 Ոչ ամի կարևոր ինչ ամենևին զմտաւ և ոչ զրեցի ինչ բնաւ բարի որ չիցէ զմագումն և զսղարումն իւր ընկալեալ յէնիականէն:

106 Եւ յանձն անուռի ամ մի աւելի՛ զոր չպարտինս, տանջել ՚ի Մաքրարանի՛ միայն թէ վնճակեալ էր ինձ բազդ կեցա յաւուրս Վերդիլեայ: — Այս բան թէպէս և ըստ արտաքին իմաստիցն հայհոյութիւն է յիմարական, այլ արգարացուցանեն զՏանդէ քննագտաք՝ ասելով է թէ այսու չափազանցութեան ձևովս կամի յայս անել միայն զմեծ սէր և զմեծարանս Ստատիոսի առ Վերդիլէ:

107 Այսինքն՝ կամք մարդոյ:

108 Քանզի ժմիս այնպէս փութով յաջորդէ կրկ յորմէ յառաջն դայ, այսինքն է՝ ուրախութեան, և արատուքն՝ արտմութեան, զի յարս անկեղծս և սարգաբարոյս նուազ ևս հնազանդին կամաց, կամ ոչ մտան առ արտաքոյ երևել աղբման կամաց:

109 Հառաչեմ գորով ՚ի մէջ երկուց հակառակաց, տեսանելով զի Վերդիլիոս կամի զուէն իմ և Ստատիոս աղաչէ զի խօսեցայց. — Ես իմանի՛մ ՚ի Վերդիլեայ:

110 Այս ինքն է երջանկութիւնն որում այնչափ ինամով հետամուտ զինին մարդիկ, և որոյ օրինակ է երկրաւոր գրախան ՚ի կատար լերինն Մաքրարանի:

111 Հուր Մաքրարանին տեէ առ ժամանակ մի, և զժոխոցն յաւիտենական է:

112 Պարտ է իմանալ ըստ բարոյական իմաստից ուրանոր միտք մարդկային չկարեն հասանել և ուր պէտք են աստուածային յայտնութեան և աստուածարանութեան, որոյ հիմն ՚ի յայանութեան է: Նախնի փիլիսոփայք ծանեան քաջ զվէրնախնամ տեսութիւնն կարգաւորիչ, անսին զհարկ բարոյական կարգի և խօսեցան և ճանոցին խրատս հանճարեղս զախտից և զուզողութեան վարուց և վնպատից խուսելոյ յայնգանէ

և ստանալոյ զայստօխի: Յայսկայր ուրեմն և Վիր-  
գիլիսս կարաց առաջնորդ լինել Տանգէի իբրև  
ասկականի ումքք քաղաքացւոյ: այլ աղգմունք  
չնորհաց, յայտնութիւն Աստուծոյ և փառաց  
իւրոց առ ընտրեալս՝ են խորհուրդք հաւատոց  
որք միայն ՚ի ձեան աստուածային յայտնութեան՝  
որոյ օրինակ է Երանուհի, կարեն իւրք ծանօթա-  
նալ Տանգէի իբրև առն քրիստոնէի, զաստուա-  
ծային յայտնութիւնն առ եկեղեցին ուղղափառ  
հաւատոց վերաբերելով յանձն իւր:

113 Իմա զԵրանուհի:

114 Այսինքն է՝ խուսելովզ ՚ի աղիտութիւնէ  
պայծառացուցեալ զվրաս և մաքրեալ ՚ի չար ա-  
խարժակաց, որք սանանն յոյժ աղատութեան  
հոգւոյ ՚ի գործել զբարի:

115 Վասն որոյ ես տեր կարգեմ զքեզ անձին  
քում: քեզ յանձն առնեմ զվարչութիւն ան-  
ձինդ: Պատիւան իմանալի է զուեսչութիւն քաղա-  
քական, և Խաչիւ՝ զհոգևորն վարչութիւն:

116 Սակոյն ոչ սարգրքն և տերեք կքելովն  
չեղին այնչափ յուզղութիւնէն իւրեանց՝ զի թըւ-  
ջունք ամբօխեալք լուսեցն:

117 Կիսասի՝ է տերի՝ ՚ի վերայ Ագրիահան ծո-  
վու մօս ՚ի Հուսակենա, ուր է լայնասփիւս ան-  
ասա շռնեաց:

118 Բամբիշնս այս է Մասիւրէ՝ զորմէ խօսի  
յԵրզն ԼԳ:

119 Պերսեփոնէ ըստ առասպելաց դուստր է  
Արամաղղայ և Դեմտրեայ, որ ՚ի հաւաքելն  
զծաղիունս նարկիսի ՚ի միասին ընդ Աստղկան,  
Հերայի և Աթենասոյ և ընդ յաւերժհարօանց և  
սիրենայց հափափեցաւ ՚ի Պուտոնէ: Արդ աս-  
տանօր ըստ ասելոյ Տանգէի՝ Դեմտրէ կորոյս  
զդուստր իւր, և Պերսեփոնէ վարեալ ՚ի գժոխս  
կորոյս զգարուն, զի յայնմ պահու մինչ քաղեր  
ծաղիունս յափրահեալ եղև:

120 Բամբիշնս իբրև շահապ իմն կողմանցս խօսի  
այս առ Տանգէ զհանդամանաց տեղւոյն և զծաղ-  
մանէ գետակին և զբաժանմանէ նորա յերկուս-  
՚ի լէզէ՝ որ է վտակ մուսացութեան յանցանաց, և  
յԵնոնէ՝ որ ՚ի միս ամէ զգործս բարին, ապա և  
զտարակոյսս ինչնորա լուծանէ. և ահա յանկարծ  
լին նուազք քաղցրերգակք և տեսնի Սայլ մի  
(որ է Ս. Եկեղեցի) քարշեալ ՚ի չորեց կենդա-  
նեաց (յԱւետարանչաց) և զնորքք եօթն պարան-  
ցիկք (եօթն առաքիտութիւնք) վարեալ յԱրծուա-  
սիւսնոյ (ի Յիսուսէ Քրիստոսէ) որ է Կորճ ըստ  
մեզ, առասպելեալ թոշնասիւնն: Հրեշտակք և  
հրեշտակապետք արկանեն ծաղիունս զնովուս. և  
՚ի մէջ ծաղկանցս այսոցիկ երևի ուր ուրեմն Երա-  
նուհի, յորմէ կշտամբանս ինչ կրեալ վասն մուա-  
ցութեանց իւրոյ՝ ապա անցեալ և սրբեալ ՚ի վը-  
տական Լէզէ և յԵնոնէ, ելանէ Տանգէ ընդ Երա-  
նուհոյն իւրոյ ՚ի յերկինս ՚ի մէջ աստեղաց:

121 Երանուհի՝ սիրուհին Տանգէի յաշեար-  
հի, իսկ բարոյական իմաստիք՝ Աստուածաբա-  
նութիւն: — Հասարակէն և հերքեալ քանդկան,  
խառ խօսեցեալ է զբրձից լուսնոյ հաստատելով  
ընծայութեամբք զկարծիս իւր և եղծանելով  
զհակաւաւորդացն:

122 Նարկիս ասեսնելով յայբեր զկերպա-  
բանս իւր կարծեաց եթէ իցէ անդ ՚ի ջուրն այլ  
ոք և կապեցաւ ՚ի սեր նորա: Ես, ասէ Տանգէ, ՚ի  
սեսանել զանձիննս զայնտօխի կարծեցի ընդ հա-  
կաւան զի իցեն պատկերք երեսութայնալք:

123 Այլ ժխօսի ինչ առ արդար կամս իղձս,  
որպէս ասնէ սերն Աստուծոյ, որ ոչ մտքէ զքք  
այլ կամի զի արբուսիքն իւր համօրէն իցեն նմանք  
այլ՝ եթէ ոչ կարեն լինել իբրև զինքն:

124 Պիլիպարէ ՚ի Փլորենասացի յազատատոհմ  
գերդաստանէ Կոնստանայ:

125 Ի պարունակն երկնայն յամրագոյն քան զայլս. որպէս է պարունակն լուսնի մերձաւորս. զոյն գոլով երկրի, որով և համառօտ 'ի շքնան իւր:

126 Յառաջն կերպարանաց որ 'ի միտս և 'ի կարծիս անտղն աղաւորի:

127 Որ թուէր վառեալ առաջն սաստիգութեամբ սիրոյ:

128 Այս անմիաբանութիւն ընդ կամս Աստուծոյ անցես զի չգտանէ անզի յերկինս 'ի պարունակս յայտարի, եթէ 'ի միտ աւցես զի 'ի հարկէ յարակից են ամենեքն սիրով ընդ Աստուծոյ, և եթէ քաջ 'ի միտ առնուցուս զբնութիւն սիրոյս այսորիկ:

129 Ասացուած փոխաբերական, որոյ իմաստքն են. Որպիսի եղև կրօնաւորական կեանքն զոր սկսաւ նա, և հակառակ ուխտիցն ոչ կարաց աւարակել:

130 Ի վերագոյն յերկինս է վասն անթերի կենացն և մեծամեծ արգեանցն Ս. Արշանոյշ (Գիւրա) ըստ որոյ կանոնացն զգետաւորին և քողարկին հետևողք իւր, առ 'ի կեալ և հանգչել մինչև ցմահ ընդ երկնաւոր փետայն, որում հաճոյ են ամենայն ուխտք որք իցեն համաբուլք սիրով հաճոյից իւրոյ:— Սրբուհին Գիւրար ծնեալ Ս. Ստիգի յամին 1193 հաստատեաց ընդ առաջնորդութեամբ քաղաքակցին իւրոյ սուրբ Փրանկիսկոսի միաբանութիւն վանական վասն կուսանաց: Մեռաւ 'ի 1223 և յետ սակաւուց կարգեցաւ 'ի Թիւս սրբոյ:

131 Եւ միւս այս հոգի լուսադայժառ:

132 Սա է հոգի լուսանշլլ մեծին Կոստանդուպոլսի սր էր գուար Հուգգիլիոսի Թագաւորին Պուլեայ և Սիկիլեայ, և ասացին զամանէ հին պատմագիրք եթէ լեալ իցէ միանձնուհի 'ի

Բալերմոյ 'ի վանս Փրիզն, և բռնի հանեալ անտի՛ յորժամ գրեաթէ անցեալ էր զաւուրքք իւրովք, և սուեալ 'ի կնութիւնն որդւոյն Բարբարոսայ՛ Արրիգեայ Յէ՛, իբրև Թագաւոր Կերմանիոյ՛ Ձր կոչեցելոյ, որով Թագաւորութիւնն Սիկիլեայ և Պուլեայ էանց 'ի ձեռս աղգատոհմին Սուելիոյ: Այլ սուեգեալ է արդ զի միանձնանոջ 'ի վանս Կոստանդուպոլսոյ և այսա 'ի պառաւութեան հարմանալն սնտոի գիւտք են Կուելիքեան պատմաց, որովք այսու կամեցան հաւատալն առնել եթէ Փրեգերիկոս Բ. ծնեալն 'ի Կոստանդուպոլսոյ գերաբրիտոսն իցէ, զորմէ առասպելաբանէին եթէ ծնանեցոց իցէ 'ի պառաւ միանձնուհւոյ: Կոստանդուհի ծնաւ արգարև 'ի 1154 և եղև կին Արրիգեայ 'ի 1186, այսինքն է 32 ամաց. և ոչ եկեաց 'ի վանս՛ այլ միշտ յարբունիս:— Սակայն Տանդէ հետևող եղև և յայամ՛ որպէս և այլուր ուրեք ուրեք, հասարակաց կարծեաց ժամանակին իւրոյ:

Իսկ զոոգս՛ Որ երեւոյր 'ի Սասլեայ գերբեւոյն ոմանք կամին ընթեւնուլ Որ յերեւոյր էլաւուքն 'ի Մուսլեայ՛ իմաստիւք, կամեալ զի բառն vento անդանոր եղեալ իցէ փոխանակ venuto 'ի որ է ասել եկեալ. քանզի Արրիգ Է կամ Ձ յետ Բարբարոսայ՛ որ եղև առաջն եկաւոր յԻտալիա, եկն երկրորդ ինքն և եղև շայր Փրեգերիկեայ Բի, որ եղև վերջն իշտոյ յաղգատոհմէն յայնմանէ 'ի վերայ Իտալեոյ: Այլ սակայն յօլովք յոյժ առաւել իմաստակց համարին հասկանալ ըստ առաջնոյ իմաստին, կերպարանելով զերեսին կայտերս սուալս 'ի փոթորկաշունչ մըրբիկ, յոր բովանդակի ասեմ և իմաստ վազանցիկ զօրութեան աղգատոհմին: Եւ ինքնին մարդարէն Եղեկել, յորմէ բազում ինչ այսպիսիս առեալ է Տանդէ՛ զՆաբուգոդոնոսոր Թագաւոր մըրբիկ փոթորիկեալ կամ հոգմ՛ խորշակի կոչէ:

133 Առ Երանուհի:

Երանուհի՛ առաջնորդ Տանգէի յԱրքայու-  
թեան, տանի զիւրն Ալեկիէրի յերկինս Փայլա-  
ծուի, ուր ժողովեալ են որք սիրեցինն զՃշմա-  
րիան և զմշտաան համբաւ անուանս. տեսանեն և  
զկայսն Յուսափնիանոս, որ հարցեալ ՚ի քերթողէն՝  
համառօտէ զպատմութիւն հռովմեական կայ-  
սրութեան:

134 Արեգակն որդէս յայտնի է՝ երթայ յարևե-  
լնց յարևմուտս. արք Կոստանդին՝ փոխելով զդահ  
իւր ՚ի Կ. Պոլս, տարաւ զարծիւն յարևմտից  
յարևելս:

135 Էնիաս. արծիւն տարեալ յԷնիասայ՝ գնա-  
ցեալ էր ընդ արևու յարևելից յարևմուտս, ՚ի  
Տրոյից յԻտալիա:

136 Ի Կ. Պոլս:

137 Ի Տրոյից:

138 Յիշէ աստ Յուսափնիանոս եթէ զվարդ յօրի-  
նեաց զՍրինագիրն յիւր անուն կոչեցեալ, ՚ի  
բիւր մի դրոց ամիտփեղով զնոսին միայն ՚ի յիսուն  
զիրս, բաւնալով զաւելորդ և զսին օրէնս:

139 Այս է միտք բանիցն. այնպէս յայտնի եղև  
օքնութիւն երկնից, զի ես համարեցայ իբրև նշան  
եթէ արգարև կամք Ստուծոյ իցեն եթէ ինձ  
պարս իցէ կալ յարբունիս իմ, զի մի յեաս կա-  
ցից ՚ի կարգաւորելոյ զօրէնս: Այս է զոր և փոքր  
ինչ ՚ի վերայ վէճ շատախ կոչէ:

140 Ընդ հենդն է և այս. և իմանայ զԱխպէլէնս  
որ սեպհականեն անձանց զարծիւն՝ զպետու-  
թիւնն հռովմեական, և զԿուելփիս՝ որք հակա-  
ռակին այնմ:

141 Իբրև զի ասիցէ եթէ այս եղև վերջին փորձն  
յորում գեո ևս վերջն անգամ բաղդ երկուց  
բաղաբացն եկաց ՚ի կշեոս:

142 Սա է Կուելնասո Կինկիննասոս:

143 Բլուրս այս է Ֆիեզոլէ, որ ապաւէն եղեալ  
Կատիլինայ՝ կործանեցաւ ըստ մեծի մասնն:

144 Ա. յսինքն է՝ մօտ ՚ի ժամանակս գալստեան  
Փրկին յաշխարհ կոմեցան երկինք խաղաղ առ-  
նէլ զաշխարհս, զի ՚ի մարգանանն Յիսուսի՛ զէպ  
էր, ասէ Տանգէ և յայլ զիրս իւր, զի և երկիր ՚ի  
բարւոք հանգամանս գամնիցն:

145 Վարոն՝ գեա որ բաժանէ զԲրովանս ՚ի Լի-  
գուրիոյ: Ի զարս և Էրա՝ գեա կք Քաղզիւյ:  
Սգբք ակնարկէ ՚ի շահատակութիւնս Կեսարու  
՚ի Քաղզիա և ՚ի Գերմանիա. և ՚ի յաջորդ քանի  
մի տողս բովանդակէ զյաղթութիւնս նորին ընդ  
այլ գանազան կողմանս:

146 Հոհաւելանոս Օքոսոս. սա պարտեալ  
զԲրուտոս և զԿատսիս՝ որք յուսարեկք գնացին  
զիւրովն, ետ զվերջնն հարուածն ան ընկերհաշ-  
տութիւն, և հաստատեաց անյեղն զկայսրու-  
թիւն:

147 Առ Տիբեր կայսերը արծիւն հռովմեական  
լի եղև փառք քան զայլ ամենայն ժամանակս:

148 Զեռամբ Տիբերի ելլոյժ Արգարութիւնն Աս-  
տուծոյ զիւրն վերժ: Պնտոս Պիղատոս կողմա-  
կալ Հրէաստանի յաւուր Տիբեր կայսեր եթող  
՚ի ձեռս Հրէից սպանեալ զՅիսուս, և զնուորք  
հռովմայեցիք պաշտպանքիացին անօրէն սպան-  
մանն. արք ամենայնիւ ՚ի գէպ էր զի արծիւն  
հռովմայեցի ՚ի ձեռս Տիբերի լցուցէ զվերժն Աս-  
տուծոյ վասն արեան աստուածային որդւոյ իւ-  
րոյ անմեղի:

149 Յեա այսորիկ արծիւն ընթացաւ ընդ Տիտո-  
սի լուծանել զբէն վրիժու մեղացն Հրէից ընդ-  
դէմ Յիսուսի. մեղաց՝ որ ՚ի կողմանէ Ստուծոյ  
վերժ ինն և քաւութիւն լեալ էր հնոյ մեղաց նա-  
խահարց մերոց:

150 Ոմանք

Così, volgendosi alla ruota sua

որ է ասել Սաղեւ 'ի հիւս Բարեւել 'ի շերման Իւր: Ոգեղէնն այն է Յուստինիանոս որ 'ի վերայ ճառաւ գայէ երեսիս այս օրինաց և զինուց պայծառութեան:

151 Վասն բանիցն սասցելոց 'ի Յուստինիանոսէ տարակուսեալ կայի և ասելի ցանձն իմ՝ Խորախուսեաց անձն իմ և խօսեաց առ Տիկինն քո առ Երանուհի:

152 Այլ մեծարանքն այն որ իշխէ բովանդակ անձին ինոյ, 'ի լսել իսկ միայն զմի և եթ զանկ անուանն Երանուհւոյ՝ տայր ինձ խոնարհել ըզգուլս իմ զ'ի վեր կայեալն առ 'ի հարցանել իբրև զայր մի որ աք ծանրացեալ իցեն 'ի քնոյ, և յետս կասեցուցանէր զիս 'ի խօսելոց:

153 Վերջելնս 'ի մէջ բոցոյ հրոյն Մաքարանի խօսէր առ Տանգէ զԵրանուհւոյն: Մաք. Երգ ԻԷ. տ. 52-54:

154 Որպէս տեսնեմս ստուգապէս է 'ի մտի քո այս տարակոյս եթէ որպէս 'ի խաչ էլանէն Քրիստոսի եղև պատիժ արդար՝ հնոյ յանցանաց, և արգարապէս պատժեալ եղև:

155 Արամ անմիջաբար ստեղծեալ յԱստուծոյ:

156 Հողւոյն սրբոյ:

157 Յիշել զբան Փրկչին յԱւետարանին՝ Եւ իմ ճանապարհ, ճշմարտութիւն և կեանք: Յովհ. Ժ. Գ. 6:

158 Այլ չարչարանքն զոր ետ խաչն Քրիստոսի՝ եթէ հայեացի և կռեսցի ըստ մարդկային բնութեան զոր յանձն էառ նա՝ այնպէս արդար եղև, զի ոչ մի ինչ այլ չարչարանք երբեք այսպէս արգարապէս տանջեաց զք: Եւ սմին հակառակ՝ ոչ երբեք եղև այսպէս անհնարինս անխառն չարչարանք, եթէ խորհիցիմք զի աստուածային անձնն եղև կրողն յորում յարակից էր բնութիւն մարդկային:

159. Ի չարչարանաց խաչին յառաջ եկին արգիւնք պէսպէսք. մահն Քրիստոսի հաճոյ էղև Աստուծոյ հատուցմամբ անարգանացն որ յԱղամայ. հաճոյ էղև և Հրէից, զի ցաւ կիբք ցասման իւրեանց:

160. Ոչ է անեալ և աճեցեալ այնպէս 'ի սէր երկնային՝ զի կարացն 'ի միտ առնուլ զբովանդակ կարողութիւն այնորիկ:

161. Որ ինչ յառաջ դայ անմիջաբար՝ առանց միջնորդի կամ երկրորդական պատճառաց գործակցութեան, յաստուածային բարութենէս յայսմանն՝ մշտնջնաւոր է. քանզի յորժամ ինքն կիբէ, որ է ասել՝ կատար զգործն՝ կիբին այն ոչ խախտի, որ է ասել՝ գործն իւր ոչ կորնչի:

162. Որ ինչ յաստուածային կարողութենէն (առանց միջնորդի երկրորդական պատճառաց, այս է՝ բնութեան զօրութեանց) յառաջ դայ՝ ամենեկին ազատ է, քանզի ոչ 'ի ներքոյ կայ զօրութեանց այս պատճառաց, որովք իբք փոխն, եղծանին և վերանորոգին:

163. Ուրեմն 'ի ճահ էր Աստուծոյ իւրովքն շաւղք՝ այսինքն է արգարութեամբ և ողորմութեամբ դարման տանել մարդոյն, դարձուցանելով զնա 'ի կեանս իւր բոլորովմբ, 'ի կեանս շնորհաց. միով ասեմ 'ի շաւղացս այսոցիկ, և կամ երկրորդմբ:

164. Աստուածային բարութիւնն որ գրու մեալ ունի զինիք իւր ընդ տիեզերս՝ հաճեցաւ երկրբումբ շաւղբս ամբառնալ զմեզ 'ի վեր յանկմանէս մերմէ:

165. Կամ՝ աստուածային բարութեամբ և կամ 'ի ձեռն մարդոյ:

166. Տուպինս է զետակ մօտ յԱստիկ. իսկ ջուրն որ իջանէ ընդ բլուրն՝ ընտրեալ տեղի ճրգ.

նութեան երանելոյն Ուրալդոսի՝ է վտակն Գրիստի, մերձ ՚ի սահման Աստիղեայ:

167. Կախեալ կայ կուշտ բարձրաբերձ լերին միոյ, որոյ վանն Պերուգիա, հեռի յԱստիղե 12 մղոնաւ ՚ի կողմանց Արևադրանն, երբեմն զցուրա կրէ և երբեմն զտօթ. զցուրա ՚ի ձեանց ձմերայնոյ այդր կուտելոց, և զտօթ յամարանի վանն բեկբեկելոյ ճառագայթիցն արևու ընդ այնս:

168. Նոկերա և Գուալդոյ մարդք Մարգեանք, հարստահարեալք յադահ վարչութենէ Հոռերրոտս թագաւորի:

169. Որպէս առնէ, ասէ, բնիկ արևս մեր՝ յորում եմքս այժմ, որ յամարանի պայծառազգեսց և ջերմագին ևս ծագէ ՚ի կողմանց երկնից որ ՚ի վերայ կայ Գանդիսի:

170. Տիկին աստ խնա զԱղբատուութիւն, առ որ՝ ասէ, որպէս մահու, ոչ ղք մտադիւր բանայ զգունն իւր:

171. Եւ առաջն ատենի եպիսկոպոսին Աստիղե քաղաքին:

172. Տիկինս այս՝ այսինքն է Աղբատուութիւն, զիւր եկաց ՚ի փեսայէն իւրմէ ՚ի Յիսուսէ որ առաջին փեսայացաւ նմին, հաղոր հարիւր և աւելի աւելք անարգեալ և անծանօթ, առանց հրաւեր սիրոյ ընդունելոյ յուսմբէ մինչև ցՍ. Փրանկիսկոս՝ որ ծնաւ յամի Տեառն 1182:

173. Եւ ոչ ընդունելի եղև, ասէ, Աղբատուութիւն այնու իսկ զի Յուլիոս Կեսար՝ նա որ գողացոյց զաշխարհ համօրէն, եգիտ զԱմիկլատէս յապահովս ՚ի նմին վիճակի յաղբատուութեան, յորժամ գիշերի բաղնեաց զգունն նորա և կոչեաց զնա բարձր ձայնիւ, որպէս զի նաւակաւ իւրով անցուցէ զինքն ՚ի Կուրացոյց յՌոտլիա:

174. Եւ ոչ այնու իսկ մեծ համարեցաւ և ընդունելի եղև զի սրտապինդ արիւտութեամբ կամ

անխոխելի հաստատամտութեամբ եկաց ՚ի սեր իւր՝ մինչև ՚ի խաչ ելանել ընդ Քրիստոսի, մինչդեռ Մարիամ Ս. Կոյսն կայր առ ոտս խաչին:

175. Երթայ ՚ի Հոովմ առ քահանայապետն Իննովկենսիոս Գ:

176. Սուլդանն Եգիպտոսի:

177. Յապառաժուտս լերին Սլուեննիոյ ընկալաւ ՚ի Քրիստոսէ զվերջին կնիքն՝ այսինքն է զվերս Յիսուսի տպաւորեալս ընդ անդամն իւր ընդ ընդ ամն երկուս, քանզի յետոյ մեռաւ:

178. Սաացուած աւետարանական, որ նշանակէ՝ որպէս յայտնի է, լինել խոնարհ և աղքատ, ուրանալով զկամս անձին:

179. Ս. Բեռնարդոս՝ յորդորեալ յԵրանուհւոյ, աղաչէ զՍ. Կոյսն զի շնորհեսցի Տանդէի բարեխօսութեամբ իւրով խոկալ զխառս Աստուծոյ:

180. Վարդո այս՝ զոր յիշատակէ կանխաւ, ընտրելոց խմբի՝ կամ թէ ասել՝ երկնածաղիկ զինուորութիւնս այս առաքինեաց երկրաւորաց:

181. Աջք Ս. Կուսին հաճոյք և պատուականք յաս Սատուծոյ:

182. Իարձան ապա առ աստուածային պայծառութիւնն, յոր անարթ է, ասէ, հաւատալ զի այլ ակն արարածային մխեսցի և տեսցէ այնպէս յստակօրէն:

183 Ս. Բեռնարդոս ընդունի զինդրուածս իւր ՚ի Ս. Կուսէն, զի Տանդէ կարացէ յառել զակն յեութիւնն Աստուծոյ, զորմէ ահա խօսի նա:

184 Ս. յսու կամի յայտ առնել զաստիկ իղձնն տեսանելոյ զԱստուած:

185 Կուսանեանն Սերբիլա գրէր զառածս և զբանալձիւս իւր գուշակօրէն ՚ի վերայ տերևոց ծառոց և դնէր ՚ի բերան անձաւի իւրոյ, ուստի և հողմիկք թեթևագոյն տարապիր առնէին զայնս:

186 Կէտ մի միայն անցելոյ ժամանակին յետ երջանիկ տեսեանս իմոյ պատճառէ ինձ (առ այն զոր տեսի ես յԱստուած) ընդարմացումն և մտնացուցիւն առաւել՝ քան որչափ շիցեն պատճառեալ քսան և հինգ դարք զհանգամանաց և զմանրամասանց արշաւանացն նաւորդաց՝ որք զնացին 'ի Կոլքիս 'ի խնդիր ոսկեդեղման 'ի վերայ Արգոս նաւու, որ լինելով առաջին 'ի սփռել զստուեր իւր 'ի վերայ երեսաց ալեաց՝ ի զարմանս կրթեաց ըստ առասպելին զաստուածն ծովուց զՊոսիդոն:

187 Աստի յառաջ վասն ունելոյս դոյդն ինչ 'ի յուշիս՝ ասացուած բանիցս լիցի ևս կրճատ քան, և այլն:

188 Աչք իմ զորացեալ ընդ տեսանէն 'ի նմա մի միայն կերպարան՝ այն ինքն է զմի և նոյն, այլափոխեալ լինէր՝ 'ի լաւադոյն փոխել տեսողական կարողութեան աչացս: Համառօտ ասել՝ ոչ փոխէր, ասէ, Աստուած, այլ զբուրութիւն իմ՝ ի տեսանէն:

189 Այս է՝ բառս «ալա» ոչ է բաւական տալ միտս նուազութեան ասացելոցս:

190 Յայտոսիկ երեսին տողս աստուածաբանօրէն վարդապետեալ է խորհուրդ ամենասուրբ Երրորդութեան:

Յ Ա Ն Կ

Առ ընթերցողս . . . . . 4

ԴժՈՒԹՔ.

Դուռն եւ դաւիթ Դժոխոց: — Քարոն . . . . . 6

Կերբերոս . . . . . 16

Որկորաժէտք: — Կիակկոս . . . . . 20

Բարկացողք: — Փիլիպպոս Արգէնտի . . . . . 62

Հրէշտակն Աստուծոյ . . . . . 32

Անձնասպանք . . . . . 36

Գերիոն . . . . . 46

Աւազակք . . . . . 50

Կոմսն Ուզոլեն . . . . . 58

Արուսեակն . . . . . 66

ՄԱՔՐԱՐԱՆ.

Սորգէլոյ . . . . . 70

Կոյսն Մարիամ եւ Տապանակն սուրբ . . . . . 78

Առ հպարտս . . . . . 82

Հայր մեր . . . . . 86

Վերելք յերկրորդ պարունակն . . . . . 90

Ստատիոս . . . . . 96

Եղեմն . . . . . 110

ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ.

Ուխտք . . . . . 120

Արծիւն Հոովմեական . . . . . 132

Խորհուրդ Մարդեղութեան . . . . . 140

Ս. Փրանկիսկոս Աստիզացի . . . . . 150

Մաղթանք առ Ս. Կոյսն . . . . . 158

Փառքն Աստուծոյ . . . . . 162

Ծանօթութիւնք . . . . . 171



## I N D I C E

Ai lettori . . . . .	5
<b>INFERNO:</b>	
La porta ed il vestibolo dell' Inferno —	
Caronte . . . . .	7
Cerbero . . . . .	17
I golosi. — Ciacco . . . . .	21
Gli iracondi. — Filippo Argenti . . . . .	27
L' Angelo di Dio . . . . .	33
I suicidi . . . . .	37
Gerione . . . . .	47
I ladri . . . . .	51
Il conte Ugolino . . . . .	59
Lucifero . . . . .	67
<b>PURGATORIO:</b>	
Sordello . . . . .	71
Maria Vergine e l' Arca Santa . . . . .	79
Ai superbi . . . . .	83
Pater noster . . . . .	87
Salita al secondo giro . . . . .	91
Stazio . . . . .	97
Il Paradiso terrestre . . . . .	111
<b>PARADISO:</b>	
I voti . . . . .	121
L' Aquila Romana . . . . .	133
La Redenzione . . . . .	141
S. Francesco d' Assisi . . . . .	151
Pregghiera a Maria Vergine . . . . .	159
La Gloria di Dio . . . . .	163




Յ Ա Ւ Ե Լ Լ Ի

---

Երես 144 'ի սկիզբն իջին, անկեալ տողս  
Առ անձնն հայելով չարջարակեր,

---





2718

2013

